ՀԱՅԿ. ԽՍԶ ԼՈՒՍԺՈՂԿՈՄԱՏ

# ԾՐԱԳՐԵՐ

Տարրական դպրոցի

## ՅԵՐԳ ՅԵՎ ՅԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ

ԼՈՒՍԸՐԱՏ

ՅԵՐԵՎԱՆ 1938

ՀԱՅԿ ԽՍԶ ԼՈՒՍԺՈՂԿՈՄԱՏ

ՍՏՈՒԳՎԱԾ Է 1961 Թ.

# ԾՐԱԳՐԵՐ

Տարրական դպրոցի

## ՅԵՐԳ ՅԵՎ ՅԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ

1832
Ա 23488

ԼՈՒՍԱՐԱՏ

ԵԵՐԵՎԱՆ 1938

Պատ. խմբ. ԱԶԱՏ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Սրբագրիչ՝ Կ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

*Գլավլիտի լիազոր 8. № 3693, Պատվեր № 285, Տիրաժ 3000*

*Հանձնված է արտադրության 14 հոկտեմբերի 1938 թ.*

*Տառաքաղված է տպելու 31 հոկտեմբերի 1938 թ.*

*Մանկավարժական Ինստիտուտի տպարան, Երևան, Մարքսի փ. № 17*

# ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

Տարրական դպրոցում յերաժշտական աշխատանքը կոմունիստական դաստիարակության միջոցներից մեկն է հանդիսանում։ Յերգ-յերաժշտության պարապմունքները պետք է աստիճանաբար և հետևողականորեն զարգացնեն ծրագրով նախատեսված գիտելիքները, ունակությունները, պետք է նպաստեն յերեխաների գործունեությունը և հետաքրքրությունն ուղղելու դեպի ընդհանուր կոմունիստական դաստիարակչական հարցերը։

Այս նպատակին կարելի յե հասնել խորհրդային կոմպոզիտորների և անցյալից մնացած յերաժշտական ժառանգության՝ յերեխաների համար մատչելի բովանդակությամբ ստեղծագործությունների յուրացմամբ, նույնպես յերեխաներին նախապատրաստելով՝ մասսայական յերաժշտական յելույթներին ակտիվ մասնակցելու։

Տարրական դպրոցում յերաժշտական աշխատանքը կայանում է խմբական յերգի (դասարանում խմբովին, միասին յերգելը), նոտային գրագիտության ուսուցման, յերաժշտության ունկնդրության և յերաժշտության ու յերգի հնչյունների ներքո շարժողությունները կատարելու մեջ։

Ժամանակի տարեկան բյուդջեյով այս աշխատանքների տոկոսային հարաբերությունը հետևյալն է՝ ժամանակի մեծ մասը— 60 % ստորին և 80 % բարձր դասարաններում—տրվում է յերգեցողության և յերաժշտական գրագիտության, մնացած ժամանակը՝ ունկնդրության և շարժումներին։

Խմբական յերգը հանդիսանում է յերաժշտական բոլոր տեսակի աշխատանքների հիմքը, այստեղ յերեխաները ակտիվ մասնակցում են իբրև կատարողներ, ուր նրանք ավելի լավ և ավելի շատ ցուցադրում են իրենց ստեղծագործական կարողությունները։

Սկզբում յերգը անց և կացվում ձայնով, իսկ հետագայում, յերբ նրանք նոտաճանաչ են, դառնում՝ նոտաներով։

Յերգեցողության ծրագրում գիտելիքները տրված են հետևյալ բաժիններով՝

1. Ձայնական—վոկալ—աշխատանք.
   ա. աշխատանք շնչառության վրա,
   բ. աշխատանք ձայնի վրա,
   գ. աշխատանք տեկստի՝ բառերի վրա—դիկցիա։
2. Աշխատանք խորային հնչունության տարրերի վրա.
   ա. ինտոնացիա—առոգանություն և ձայնաշար,
   բ. անսամբլ,
   գ. խորային ունակություններ։

Ձայնական հմտությունները տրվում են յերգի մատերիալի մեջ և նույնպես ձայնամարզության. այս աշխատանքը դասատուն լրացուցիչ կերպով անց և կացնում իմբական պարապմունքների ժամանակ։

Խորային հնչողության ելեմենտների վրա տարված աշխատանքը պիտի հետապնդի սովորեցնել յերեխաներին յերգել ներդաշնակ և դեղարվեստական կատարումով։

Ծրագրում տրված և և լրացուցիչ նյութ, սա այն նպատակով է արված, որպեսզի ուսուցիչն ուզած ժամանակ սրանցով փոխարինի ծրագրով տված հիմնական նյութերը, յերբ նա գործ է ունենում ավելի առաջադեմ դասարանների հետ։

Յերաժշտական դրագիտությունը հետևյալ նպատակին և ձգտում. յերեխաները յերգը սովորելիս, կամ յերաժշտության ունկնդրման ժամանակներում կարողանում են ծանոթանալ անցած նյութերի բնույթին և յերաժշտության արտահայտման միջոցներին, որինակ՝ ֆորմա, ձայնածավալ, տեմպ, լադ, ռիթմ, մետր, մելոդիա և այլն։ Իսկ հետագայում սովորում են հասարակ ինտերվալները (լսել-ձայնագրել) և մինչև չորրորդ դասարանը փորձառություն են ձեռք բերում նոտայի ընթերցանության և պարզ յերգերը նոտաներով յերգելու մեջ։

Յերաժշտության ունկնդրության դասին պետք է տալ այնպիսի ստեղծագործություններ, վորոնք վառ, ցայտուն պիտի լինեն յերաժշտական արտահայտության միջոցներով.

սրանցով պիտի սովորեցնել յերեխաներին ճանաչելու յերաժշտական նյութերը՝ մատչելի ձևով պարզելու նրանց ունկնդրած յերգերի և նվագների բովանդակությունն ու խարակտերը։

Սկզբում յերեխաներին տրվում է վոչ բարդ յերաժշտական ստեղծագործություններ—ծավալով փոքր, բովանդակությամբ ցայտուն և խարակտերով ու յերաժշտական արտահայտությամբ իրար հակադիր՝ կոնտրաստ։ Որինակ «Քսանամյակի յերգը»՝ ուրախ, «Մարալը» յերգը՝ հանդիստ—սահուն։ Յերաժշտության ունկնդրության նյութերը հետդհետե բարդանում են. արդեն III և IV դասարաններում յերեխաները ծանոթանում են ծավալով, ֆորմայով և բովանդակությամբ ավելի բարդ յերաժշտական աշխատանքների հետ։ IV դասարանում տրվում են համառոտ տեղեկություններ կոմպոզիտորների և յերաժշտական գործիքների մասին։

Շարժումների մասը տարրական դպրոցում հանդիսանում է յերաժշտական ուսուցման աշխատանքների համար իբրև ոժանդակ միջոց։ Նա տրվում է պարզելու, թե ինչ չափով են ըմբռնել յերեխաները վորևե յերաժշտական յերկ. նա նպաստում է այս յերկերի ըմբռնման խորացման և շարժումների միջոցով մի շարք յերաժշտական ունակությունների յուրացման, վորոնք անհրաժեշտ են հետագա յերաժշտական գրագիտական աշխատանքների համար. որինակ՝ յերաժշտական յերկի բաժանումը մասերի, ֆրազների, չափերի և տևողությունների ուսումնասիրության համար և այլն։ Շարժումների աշխատանքը կազմակերպվում է անցած յերաժշտական մատերիալի վրա՝ խմբական յերգի և ունկնդրության միջոցին։

Շարժումների աշխատանքների հիմքում դրվում են յերաժշտական առաջադրանքներ նրանց ստիճանական հետևողականության և բարդության աճումով։ Ի բաց առյալ բաղխում տալը՝ դիրիժորությունը, ոգտագործվում են յերեխաներին ծանոթ շարժումները, վորոնք ձեռք են բերված ֆիզկուլտի պարապմունքներից, որինակ՝ քայլը, վազը, թռիչը, պար, գործողություններ առարկաների հետ և այլն (շարում, ապաշար, շրջան, սյունաշարք, տողան և այլն)։ Այս բոլոր շարժումներն ոգտագործվում են յերաժշտության հետ համաձայնեցրած։

Յերեխաների գիտելիքների և ունակությունների ստիճանական զարգացումն ապահովելու համար պետք է խիստ պլանա-

վորել յերաժշտության ծրագիրը։ Քառորդի ծրագիրը կազմելիս պետք է հաշվի առնել յերեխաների հետ տարված նախընթաց աշխատանքները և նրանց պատրաստականության մակարդակը։

Դասատուն առանձին խնամքով պիտի կազմի իր յուրաքանչյուր դասի պլանը, նա պիտի պարզ պատկերացնի կոնկրետ խնդիրները, հիմնական եղանակները և յուրաքանչյուր դասին յերեխաների հետ տարվելիք աշխատանքի ձևը։

Ամբական յերգեցողությունը, նոտային գրագիտությունը և յերաժշտության ունկնդրումը պետք է մտնեն յուրաքանչյուր դասի մեջ իբրև նրա հիմնական ելեմենտներ։ Յերգ-յերաժշտության դասի հաշվառքը կատարելու յե ուսուցիչը սիստեմատիկաբար ամբողջ ուսումնական տարվա ընթացքում և, ի վերջո, այդ հաշվառքը պիտի արտահայտվի դպրոցում ընդունված ձևով՝ աշակերտների առաջադիմության գնահատականներով։

Ծրագիրն ամբողջապես նկատի յե առել այն դասատուին, վորը տիրապետում է յերաժշտական վորևե գործիքի։

Այն դպրոցներում, ուր յերաժշտության գործը տանում է այնպիսի դասատու, վոր վորևե յերաժշտական գործիքի վրա նվագել չի իմանում, այդտեղ ունկնդրությունը պիտի կատարվի յերգելով։ Յեթե դպրոցում հնարավորություն կա, ունկնդրություն կազմակերպելիս պիտի ոգտագործել պատեֆոն և ռադիո։

Շարժումները անց են կացվում պարի և խաղի ձևով յերգերով, վորոնք նախապես անցած են լինում դասարանում։

## ՅԵՐԳԱՐԿՆԵՐԻ ՅԱՆԿ (ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԱՄԱՐ)

### ԺՈՂՈՎԱԾՈՒՆԵՐ ՅԵՐԳԵՐԻ ՅԵՎ ՊԻԵՍԱՆԵՐԻ

Յերգեր յերեխաների համար — Музгиз. I և II մաս, 1938 թ.։

Յերգերի ժողովածու տարրական դպրոցների համար, հրատ. Тритон, 1936 թ.։

«60 նախադպրոցական յերգեր»-ի ժողովածու, հրատարակ. Музгиз, 1937 թ.։

Լ. Ռիվուցկի—Ուկրայներեն 20 յերգ, հրատարակ. Мистецство 1935 թ.

Զայկովսկի—ոպ. 39. Մանկական ալբոմ։

Շուման—ոպ. 68. Ալբոմ պատանիների համար։

Ժիլյայեվ և Միտլով— «Յերաժշտական քրեստոմատիա»։

*Մերկել, Բուտով և Կամենեցկայա—«Շարժումներ և յերաժշտություն», հրատ.* Тритон, *1936 թ.։*

*«Պիոներական և դպրոցական յերգերի» ժողովածու,* Музгиз, *1934 թ.։*

*Հետևյալ կոմպոզիտորների դաշնամուրային գրականության առանձին հրատարակություններ. Գլինկա, Լյադով, Մոցարտ, Բեթհովեն և ուրիշների։*

*Ռիմսկի-Կորսակով—ոպերա «Հեքիաթ Սալթան թագավորի մասին»։*

## ԲՐՈՇՅՈՒՐՆԵՐ

*Կարինցև—Մոցարտ, հրատ.* Музгиз:
» —*Բեթհովեն,* » »
» —*Գոսսեկ,* » »

## ԻՆՔՆՈՒՍՈՒՑՄԱՆ ՁԵՌՆԱՐԿՆԵՐ

*Իլյուխին Ա.—Նոր ձեռնարկ բալալայկայի նոտային և թվանշանական սիստեմով, հրատ.* Музгиз, *1936 թ.։*

*Իվանով Մ.—Ձեռնարկ-դասագիրք ինքնուսուցման յոթլարանի գիտարայի նոտային և թվանշանական սիստեմով, հրատարակ.* Музгиз *1937 թվի։*

*Բրյուսովա Ն.—«Ցերաժշտական գրագիտություն», հրատարակ.* «Крестьянская газета» *թերթի 1937 թ.։ Գրադարան «Ժողովրդական ստեղծագործության», 6 հատոր։*

## ՀԱՅԵՐԵՆ ՆՅՈՒԹԵՐ ՅԵՎ ՁԵՌՆԱՐԿՆԵՐ

1. *Ազատ Մանուկյան. «Փնջիկ» մանկական յերգերի ա. բ. գ. դ. տետրակներ։*
2. *Դ. Ղազարյան. «Մանկական յերգերի ժողովածու», 1. 2. 3 տետրակներ։*
3. *Ռոմ. Մելիքյան. «Դպրոցական յերգեր»։*
4. *Գեղարիկ. «Ժողովածու մանկական յերգերի»։*
5. *Միք. Միրզայան, «Նախադպրոցականի յերգերն ու խաղերը»։*
6. *Ռոմ. Մելիքյան. «Պիոներական յերգեր»։*
7. *Ս. Գալիկյան. «Նախադպրոցական յերգեր»։*
8. *Ռոմ. Մելիքյան և Ազատ Մանուկյան. «Ցերաժշտական այբբենարան», ա և բ մասերը (աշակերտության համար)։*

9. Միք. Միրզայան. «Նոտային գրագիտության դասագիրք»։
10. Ան. Տեր Ղևոնդյան. «Ելեմենտար թեորիա», ձեռնարկ դասատուների համար։

«Գուշկինը գլրոցական յերգերում», կազմեց Աղատ Մանուկյան։

Նյութերի համար դիմել Հայպետհրատի յերաժշտական խանութին։

# Ծ Ր Ա Գ Ի Ր

## ԱՌԱՋԻՆ ԴԱՍԱՐԱՆ

### ԽՄԲԱԿԱՆ ՅԵՐԳ

#### 1. ՎՈԿԱԼ ԱՇԽԱՏԱՆՔ

Շնչառության ճիշտ ոգտագործումը յերգի սկզբից և նրա տնտեսումը մինչև ֆրազի վերջը։ Հմտություն ֆրազների արանքում շնչառությունը փոխելու։ Յերգելու ժամանակ ուղիղ պահել գլուխը, իրանը և բերանը։ Յերգել առանց ճչոցի և լարման, բնական, ազատ։

Կարողանալ յերգել կապով (լեգատո), որինակ՝ «Ստալին պապի թոռնիկները» յերգը. կարողանալ յերգել թեթև, շարժուն ձայնով, որինակ՝ «Ջան ջան ջան աշուն է»։

Ուղիղ և պարզ արտասանել յերգի բառերը (պարզ դիկցիա)։

#### ԱՇԽԱՏԱՆՔ ԽՄԲԱԿԱՆ ՀՆՉԵՂՈՒԹՅԱՆ ՎՐԱ

Սկսել և վերջացնել յերգը միասին և միաժամանակ, ուսուցչի ցույց տված նշանով։

Յերգել՝ ճիշտ կատարելով, արտահայտելով յերգը (մաքուր ինտոնացիա) պարզ ինտերվալների սահմաններում (1-ին ոկտավի դո-ից մինչև 2-րդ ոկտավի դո-ն), չափավոր շարժումով։ Պարզ կատարել յերգի ռիթմը։ Նմանեցնել իր ձայնը իր ընկերների ձայնին (ձայների հավասարեցումը ուժի տեսակետից)։

Կարողանալ յերգել առանց գործիքի, որինակ՝ «Լեպո լև լե», «Բերքի տոն», գործիքով՝ Ս. Գալիկյանի «Բանակը Կարմիր»։

#### ՅԵՐԳԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՆՅՈՒԹԵՐ. 15-ԻՑ ՎՈՉ ՊԱԿԱՍ

1. Ջան ջան ջան աշուն է . . . . . Դ. Ղազարյանի
2. Բերքի տոն . . . . . Միք. Միրզայանի
3. Թմբկահար . . . . . Միք. Միրզայանի
4. Ստալին պապի թոռնիկները. . . . Միք. Միրզայանի
5. Յերկար ապրի մեր Ստալինը . . Ս. Սերեբրակյանի

6. Հէյ, Ջան Հոկտեմբեր . . . . . Կ. Զաքարյանի
7. Բանտայակի յերգը . . . . . Աղատ Մանուկյանի
8. Փափուկ, սպիտակ ձյուն և յեկել . . Գուրգ. Միրզայանի
9. Մանուկն ու ձյունը . . . . . Դ. Ղազարյանի
10. Եսպես եկ լավ նոր տարի . . . Աղատ Մանուկյանի
11. Տոնածառ . . . . . Միք. Միրզայանի
12. Լենին պապին եկ . . . . . Ս. Գալիկյանի
13. Խնդության յերգ . . . . . Միք. Միրզայանի
14. Ջան գառնուկ . . . . . Ժողովրդական
15. Լեպո . . . . . »
16. Մարալ . . . . . »
17. Եկ ուժ չունի ձմեռը . . . . . Ս. Գալիկյանի
18. Սարյակները . . . . . Միք. Միրզայանի
19. Մայիս . . . . . Դ. Ղազարյանի
20. Ջան մայիս . . . . . Աղատ Մանուկյանի
21. Մայիս . . . . . Ս. Գալիկյանի

## ԼՐԱՑՈՒՑԻՉ ՆՅՈՒԹԵՐ

1. «Մենք ունենք դրոշ ալ կարմիր». Կրասով—Ռոմ. Մելիքյանի
2. «Բանակը կարմիր» . . . . . Ս. Գալիկյանի
3. Վոսկե ձվիկի հեքիաթը . . . . Աղատ Մանուկյանի
4. Եյ Ջան անցան . . . . . » »
5. Զարաճճի մանուկի պես . . . . . Դ. Ղազարյանի
6. Լոբիկ . . . . . Ժողովրդական
7. Գարունն յեկավ . . . . . »
8. Դաշտի շողիկ շաղիկները . . . . . Դ. Ղազարյանի
9. Կարմիր արև . . . . . Աղատ Մանուկյանի
10. Առնետը . . . . . Բեթհովենի
11. Կակաչը . . . . . Ռոմ. Մելիքյանի
12. Իմ ծիտիկ . . . . . Վ. Ուսը-Շատի

Ոգտագործել համապատասխան ընտրությամբ։

## ՑԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՐԱԴԻՏՈՒԹՅՈՒՆ

### ԼՍՈՂԱԿԱՆ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Կարողանալ տարբերել ռեգիստրը—բարձր և ցածր (նայել ունկնդրության բաժնում)։ Կարողանալ 2 ձայնից վորոշել՝ վորն

և բարձր, վորը՝ ցածր. (սկսած դեցիմայից—10-րդ աստիճանի նոտան մինչև կվարտան—քառյակը)։ Ցերգել դո մաժոր ձայնաշարը տալով նոտաների անունները (յել և նՉ)։ Կարողանալ տարբերել իրար մոտ և մեջընդմեջ դասավորված ձայները (աստիճանաբար մելոդիկ հնչմամբ), որինակ՝ դո-ռե-մի—մի-ռե-դո. դո-մի=մի-դո)։ Ցերեք ձայների յերգելը (մաժոր յեռահնչյուն)։ Կարողանալ լսողությամբ վորոշել ձայների թիվը, վորոնք վեցված են աստիճանական հնչմամբ, վորոշել նրանց ինչքան բարձր լինելը։ Կարողանալ միաժամանակ հնչելիս վորոշել տարբեր ձայների թիվը. որինակ՝ տերցիա և տրեզվուչիա (трезвучие)։ Կարողանալ վորոշել յերկար և կարճ ձայները (տեվողության)։ Ծանոթ յերգի վորոշ ռիթմիկ մասի արտահայտելը ծափերով։

## ՅԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ՈՒՆԿՆԴՐՈՒԹՅՈՒՆ

### ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՅԵՎ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

Յերաժշտական ստեղծագործության խարակտերի և յերաժշտության արտահայտության միջոցների բնորոշումը։

1. Հետևյալ յերգերը բնութագրել՝

| | |
|---|---|
| «Լեպո»<br>«Քսանամյակի յերգը» | Ուրախ բնույթի։ |
| «Հե՛յ, ջան Հոկտեմբեր» (քայլերգ)<br>«Ստալին պապի թռունիկներ» | Հանդիստ բնույթի։ |

### ՈՒՆԿՆԴՐՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԵՐ

1. Ազատ Մանուկյան—«Վոսկե ձվիկի հեքիաթը»։
2. Բեթհովեն—«Առնետը»։
3. Դ. Ղազարյան—«Մանուկն ու ձյունը»։
4. Ռոմ. Մելիքյան—«Կակաչը»։
5. Ս. Գալիկյան—«Ծիտը»։
6. Ժողովրդական—«Ջան դառնուկ»։

### ԻՆՍՏՐՈՒՄԵՆՏԱԼ ԳՈՐԾԵՐ

Ունկնդրություն պատեֆոնի. թեթև մարշեր, վալսեր և Solo կատարումներ ջութակի, դաշնամուրի և այլ գործիքի վրա։

Ունկնդրություն ռադիո-հաղորդման մանկական ծրագրային հաղորդումների։

## Շարժումներ
### ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

*Կարողանալ տարբերել և տալ յերաժշտության բնույթը շարժումներով՝ կայտառ, հանդիստ, կենդանի, ցայտուն արտահայտված մարշի բնույթը, պարերգի բնույթը (մարշերովկայի ժամանակ, խաղանման շարժումներով, պարերի ձևերով և նժանողություններով)։ Կարողանալ շարժումներով արտահայտել յերաժշտական լեղվի տարբեր ելեմենտները. տեմպը՝ չափավոր, քայլքը՝ միջին արագության։ Տեմպը արագ—վազքը միջին արագության, պարերի շարժումներ։ Դինամիկա— ֆորտե և պիանո (ուժեղ և մեղմ), եներգիկ և թեթև քայլք, դրոշի բարձրացում և իջեցում։*

*Ռեգիստրները—բարձր, ցածր—վերարտադրում տարբեր բնույթի շարժումների։*

*Լեգատո և ստակկատո—սահուն շարժումներ, (հանդիստ քայլք), գնդակի իրար հանձնելը և ընդհանուր շարժումներ։*

*Ֆորմա—կուպլետներ, նախերգ, կրկնակ և յեզրափակում, շարժումների փոփոխումը։ (Ուղղության փոփոխում, շրջադարձեր, կանգառներ և վերաշարում)։*

*Մետր և ռիթմ—կարճ յերգի ռիթմիկ նկարի, կամ թե ինտերումենտալ աշխատության վերարտադրումը ծափերով, վոտքի խփոցով և թռիչքաձև շարժումներով։ Ուժեղ ժամանակի զգալը դրոշակի կամ գնդակի ժարժումներով (վերելք, հարված, նետում)։*

### ՆՅՈՒԹ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ

*1. Ժողովրդական—«Լեպո լե լե»։*
*3. » —«Ջան գասնուկ»։*
*3. Ազատ Մանուկյան—«Կարմիր արև»։*
*4. Մի.ք. Միրզայան—«Թմբկահար» (քայլերգ)։*
*5. Ս. Գալիկյան—«Բանակը կարմիր» (դրոշակներով)։*
*6. Կրասով—« Մենք ունենք դրոշ ալ կարմիր» (դրոշակներով)։*

*Խաղեր.—«Գունավոր դրոշակների խաղ»։ Իր տեղը գտնել —(1-ին վարիանտ՝ քայլի ժամանակ—վորևե մարշ. 2-րդ վարիանտ՝ վազքի ժամանակ—«Как на тоненький ледок»). —«Лошадки»—քայլել, վոտքերը վեր բարձրացնելով, ծնկերը կեռած կամ թռիչքներ։ Կրասև—«конь»։*

Պարեր.

1. «Լեզո»։

2. «Ալմաստ»։

3. «Հայկական պար»։

Ինսցենիրովկա.

«Պապն ու շաղգամը»—Դ. Ղազարյանի։

## ՅԵՐԿՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՆ

### ԽՄԲԱԿԱՆ ՅԵՐԳ

#### ՎՈԿԱԼ ԱՇԽԱՏԱՆՔ

Սովորել խնայողաբար ծախսել շունչը յերկար ֆրազների ժամանակ։

«Ստալին պապի թոռնիկները». յերգել կապով պիանո և մեցցո-ֆորտե (բավականին ուժեղ)։

«Լենին պապին ել». կարողանալ ձայնը յերկարացնել. տալ ընդհատ, առանց ճչոցի ձայն։ Յերգի բառերն ուղիղ վանկերի բաժանել և արտասանել. շղացող տառերը փոխադրել հաջորդ վանկին։

#### ԱՇԽԱՏԱՆՔ ԽՄԲԻ ՀԵՏ

Ձայնի հաստատուն դո-ի և յերկրորդ ռե-ի վրա։

Մաքուր առոգանություն։ Միաձույլ ներդաշնակ հնչեղություն, թե ուժի և թե տեմբրի։ Տարբական ունակություն յերկու պարտիայով յերգելու։

Յերգել առանց նվագակցության։

Յերգել դինամիկ գունավորման կատարումով (պիանո, մեցցո-ֆորտե, հետզհետե ուժեղացնել և թուլացնել ըստ ֆրազի կազմության)։

#### ՅԵՐԳԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՆՅՈՒԹԵՐ. 15-ԻՑ ՎՈՉ ՊԱԿԱՍ

1. «Ինտերնացիոնալ»—Դեկեյտերի։

2. «Ջան Ստալին»—ժողովրդական, աշուղ Գրիգորի։

3. «Կոմսոմոլ յերկիր»—խորհրդային ֆոլկլոր, մշ. Աղատ Մանուկյանի։

4. «Հոյ նազան»—ժողովրդական։

5. «Աղվես գնաց մտավ ջաղաց»—ժողովրդական։

6. «Աղչկերք պար բռնեցեք»— »

7. «Վողջույն բանբակի արտերին»—Ս. Գալիկյանի։

8. «Պարտիզանական»—Ատուրովի։
9. Կոլխոզնիկ Վանիկը»—Ազատ Մանուկյանի։
10. «Մենք առաջ շարժվենք»—Անտ. Մայիլյանի։
11. «Արևի պես ճիթ անենք»— » »
12. «Կաքավիկ»—Ազատ Մանուկյանի։
13. Մանարանում»—Ս. Մուրադյանի։
14. «Ձմեռվա իրիկունը»—Անցելի։
15. «Նամակ ընկ. Վորոշիլովին»—Բոբերի։
16. «Փիսոն, փիսոն փափկամազ»—Վ. Ռեմբ-Շատի։
17. «Աբի դարուն»—Միք. Միրզայանի։
18. «Բացվում են գարնան»—Ան. Տեր-Դավոնդյանի։
19. «Առուն»—Գր. Մկրտչյանի։
20. «Մայիս» (Բնության մեջ մի հատիկ ես)—Մ. Ավետիսյանի։
21 «Ալ ու ալվան վառ մայիս»—Սեթ Վոսկանյանի։

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՆՅՈՒԹԵՐ

1. «Աշուն»—Մ. Ավետիսյանի։
2. «Ցեկավ կարմիր Հոկտեմբերը»—Կարո Զաքարյանի։
3. Եյ ջան անցան—Ազատ Մանուկյանի։
4. «Դաշտի շողիկ-շաղիկներ»—Դ. Ղազարյանի։

Ոգտագործել նյութերը համապատասխան ընտրությամբ։

## ՑԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԳՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Լսողական ունակության և գիտակցության զարգացում։ Տևողությունների զգալը և ճանաչումը՝ կես, քառորդական և ութերորդականի պատկերացումը, գրության ձևը։

Նախնական վարժություն բաղխելու և հմտություն յերկուսի բաղխելու։

Հասկացողություն բարձրության մասին. խորացում առաջին դասարանում ձեռք բերած գիտելիքների։ Հասկացողություն հնգայնի (նոտայի տող) գծերի, ջութակի բանալիի և ոժանդակ գծիկների մասին։

Ձայների դասավորությունը հնգայնի վրա. դո-մաժոր (մի ոկտավի սահմանում)։

Ցերգեր և վարժություններ կվինտայի սահմանում։ Ցերգել դո-մաժոր գամման, (տալով նոտաների անունը)։ Նոտագրության

սկիզբ։ Մետրի զգացում։ Ցերկմասանի չափ (ուժեղ, թույլ մասեր)։ Տակտի գիծ, բանալիի մոտ գրված չափի նշաններ։

## Նյութեր

Ժողովրդական յերգեր՝
«Արև, արև յեկ յեկ»։
«Հուռին գնաց բանջարի»։
«Խնոցը»։
«Աշունն իջավ»։
«Հոյ նար»։

Նյութերը տես՝ «Ցերաժշտական այբբենարան»—Ռոմ. Մելիքյանի և Աղատ Մանուկյանի, I մաս, Ցերեվան, Պետհրատ)։

## ՑԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ՈՒՆԿՆԴՐՈՒԹՅՈՒՆ

### ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՅԵՎ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

Բնորոշում՝ յերաժշտական ստեղծագործության խարակտերի և յերաժշտական արտահայտության միջոցների։

1. Կարողանալ բնորոշել զանազան բնույթի մարշերը, որինակ՝ Կրասևի—«Մենք ունենք դրոշ ալ կարմիր», կամ Ս. Դալիկյանի—«Մայիս» յերգը—ուրախ բնույթի։

## ԻՆՍՏՐՈՒՄԵՆՏԱԼ ԳՈՐԾԵՐ

Ունկնդրություն պատեֆոնի՝ թեթև մարշեր, վայլսեր և Solo կատարումներ ջութակի, դաշնամուրի և այլ գործիքների վրա։ Ունկնդրություն ռադիո-հաղորդման մանկական հաղորդումների։

## Շարժումներ

### ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կարողանալ տարբերել և շարժումների միջոցով արտահայտել յերաժշտության բնույթը (խաղեր շարժումներով, նմանողություն, պարերգային) և յերաժշտական լեզվի տարբեր ելեմենտները։

Տեմպ. չափավոր (քայլք, վազք միջին արագության), դանդաղ (դանդաղ քայլք՝, արագ (միջին արագության վազք և արագ քայլք), շարժումների արագացումը և դանդաղեցնելը (քայլքից վազքի անցնել և ընդհակառակը)։

Դինամիկա. Ֆորտե և պիանո. Ծանր և թեթև շարժումներ ավելի բարդ ռիթմակներում (շարժում միայնակ—պիանո. խմբովին—ֆորտե)։ Հնչեղության ուժեղացում և թուլացում—շարժումների բնույթի փոփոխում։

Ստակկատո և լեգատո—ընդմիջվող և սահուն շարժումներ քայլքի, վազքի և թռիչքի ժամանակ։

Ֆորմա, մասեր և ֆրազներ. 3 մասյա ֆորմա, յուրաքանչյուր մասի սկզբից փոփոխել շարժումները ըստ ֆրազների։

Մետր և ռիթմ. ավելի բարդ ռիթմիկ նկար վորևե յերգի կամ գործիքական աշխատության—ծափեր, քայլք, թռիչքաձև շարժումներ։

Բաղխում տալ. ըստ $^2/_4$ և $^3/_4$. տևողություն՝ քառորդ, ութերորդ և կես։

ՆՅՈՒԹ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Ժողովրդական—«Հոյ նաղան»։

» «Աղջկերք պար բռնեցեք»։

Անտ. Մայիլյան—«Մենք առաջ շարժվենք»։

Կրասև—«Խիզախ պիոներ ենք մենք» (դրոշակներով)։

Ազատ Մանուկյան—«Ծաղիկների յերգը»։

Խաղեր.—«Ողակ, գտիր ջոկատավարին» քայլք, իր տեղը գտնելու համար—վորևե մարշ իր նախերգանքով։

«Բերդ և զորականներ». շարքով շարժում ջոկատավարի հետևվից, փոփոխելով շարժումները ձայնի ուժեղացման ժամանակ—կանգ առ և վորս ըստ սիգնալի։

«Կարուսել»—շարժումներ շրջանով ձեռք-ձեռքի բռնած, կամ պարանով. աստիճանաբար արագացնել և դանդաղեցնել։

Պարեր—ժողովրդական յերգ—«Հոյ նաղան», «Լեպո լե լե», «Աղվես գնաց մտավ ջաղաց»։

Պարեր ըստ ինսցենիրովկայի մոմենտների։

## ՅԵՐՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՆ

### ԽՄԲԱԿԱՆ ՅԵՐԳ

ՎՈԿԱԼ ԱՇԽԱՏԱՆՔ

Ձայնի հաստատումը փոքր ոկտավի «սի» նոտայի վրա մինչև յերկրորդ ոկտավի «մի» նոտան (առաջին ձայնի յերգիչները do-mi, յերկրորդ ձայները si-re։

Ձափավոր տեմպի ժամանակ պառուզա չեղած դեպքում կա-

բենալ ֆրազների արանքում շունչ առնել։

Վերցնել ծածկված ձայներ բարձր ռեգիստրում։

Ցերկձայն յերգելիս՝ ճիշտ կատարել մելոդիան (մաքուր ինտոնացիա), ձայնը չջոկվի խմբից, ճշտիվ պահել յերգի ռիթմը։

Սովորել յերգել վոչ բարդ յերգեր նոտաներով։

## ՆՅՈՒԹԵՐ ՅԵՐԳԵՑՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ, 10-ԻՑ ՎՈՉ ՊԱԿԱՍ

«Ինտերնացիոնալ»

1. «Աշուն»—Ազատ Մանուկյանի։
2. «Բերքի տոնը»։
3. «Կոմսոմոլ յերկիր» (յերկձայն)—Խորհրդային ֆոլկլոր։
4. «Մանան և Զանան»—Ժողովրդական։
5. «Զան կարմիր բանակ» (յերկձայն)—Ս. Սերեբրակյանի։
6. «Գարնան լալա»—Արմ. Տիգրանյանի։
7. «Կաքավիկ» (2 խմբի համար)—Կոմիտասի։
8. «Անուշ-անուշ»—Ս. Դեմուրյանի։
9. «Պարտիզանական»—Սատուրովի։
10. «Անվախ ընկեր» (յերկձայն), լա մաժ. տոնայնությամբ։
11. «Ցերգ հայրենիքի մասին»—Դունայեվսկու։
12. «Ցերգ Ստալինի մասին»—Ռեվուցկու։
13. «Ցերգ Վորոշիլովի մասին»—Գակրասի։
14. «Ցերգ Ղուկաս Ղուկասյանի»—Մուշ. Ազատյանի։
15. «Գեղեցիկ ու զով» (յերկձայն)—Գր. Մկրտչյանի։
16. «Դու կապուտակ»—Դ. Ղազարյանի։
17. «Ցեկավ գարուն»—Ազատ Մանուկյանի։
18. «Մեկը Մայիսի» — » »
19. «Ծաղկաձոր» (ժիտձայն)—Ազատ Մանուկյանի։

## ՑԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԳՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

### ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՅԵՎ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

Կարողանալ լսողությամբ վորոշել մաժորը և մինորը (հաստատել մաժոր և մինոր լսելուն յերաժշտական ստեղծագործությունները)։

Ինտերվալ սեկստա, սեպտիմա և ոկտավա, ամրացում այն ինտերվալների, վորոնց անցած են նախորդ դասարանում։

Ծբ. յերգ և յերգեցող—

ՀՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ № 2
ԱԿԱԴԵՄԻԱ
7832
23488

ինտերվալների անունները։ Սոլֆեջիո անցած ծանոթ ինտերվալների սահմանում։

Ցերեքմասանի չափ (տակտերի 3 մասի բաժանելը։) Բաղխում տալ։

Դինամիկ յերանգավորման (оттенок) նշանակումը՝ պիանո (մեղմ), ֆորտե (ուժեղ), կրեշչենդո (ուժեղացնել), դիմինուենդո (ձայնի ուժը աստիճանաբար թուլացնել)։

## ՆՅՈՒԹԵՐ

1. Ոգտագործել «Ցերաժշտական այբենարան», Ռոմ. Մելիքյանի և Աղատ Մանուկյանի (II մասը)։

2. Նոտային գրագիտության դասագիրք, Միք. Միրզայանի։ (Ոգտագործել ծրագրի «Նյութեր յերգեցողության համար» ցանկից համապատասխան յերգեր)։

## ՑԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ՈՒՆԿՆԴՐՈՒՄ

### ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՅԵՎ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

Ցերաժշտական ֆրազ, յերաժշտական թեմա, մելոդիա և ակկոմպանիմենտ։

Ծանոթություն յերաժշտական տարբեր ժանրերին և յերաժշտական ստեղծագործության տարբեր ձևերի հետ։

Ցերգ, մարշ, պար, յերաժշտական պատկեր։ Հասկացողություն ոպերայի մասին։

Լադ—մաժոր, մինոր (զգալը, ճանաչելը)։ Համառոտ տեղեկություններ կոմպոզիտոր Կարա-Մուրզայի, Կոմիտասի, Արմ. Տիգրանյանի, Հարո Ստեփանյանի և Աղատ Մանուկյանի մասին։

## ՆՅՈՒԹԵՐ

Վոկալ ստեղծագործություններ.

1. Ժողովրդական

| | |
|---|---|
| ա. «Հոյ նազան»<br>բ. «Լեպո» | Կարա-Մուրզայի։ |
| 2. «Անձրևն յեկավ»<br>«Կաքավիկ» | Կոմիտասի։ |

3. «Մայի տակին» («Անուշ» ոպերայից) Արմ. Տիգրանյանի։

4. Խմբերգ և քայլերգ «Լուսաբացին» ոպերայից—Հարո Ստեփանյանի։

5. «Լինում է մի սար» «Զարի վերջը» ոպերայից | Ազատ
«Ծիտիկի որորը» . . . . . | Մանուկյանի։

ՑԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ՈՒՆԿՆԴՐՈՒԹՅՈՒՆ

Ինստրումենտալ գործեր. ունկնդրություն պատեֆոնի՝ թեթև մարշեր, վայլսեր, սիմֆոնիկ և փողային որկեստրներ. solo դաշնամուրի, ջութակի և այլ գործիքների։

Խորհրդային կոմպոզիտորների ժասսայական և խորային յերգերը անցած ծրագրից և ծրագրից դուրս։

Ունկնդրություն ռադիո-հաղորդման ժանկական և ոպերային հաղորդումների։

## ՉՈՐՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՆ

### ԽՄԲԱԿԱՆ ՑԵՐԳ

### ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

Ցերկձայն աշխատանք ավելի բարդ մատերիալի վրա։ Ձայների ժամացում՝ կայունացում փոքր ոկտավի si և յերկրորդ ոկտավի fa ձայների վրա (առաջին ձայները՝ do—fa, յերկրորդ ձայները՝ si—re)։

«Կանոններ» (Ռոմ. Մելիքյանի և Ազատ Մանուկյանի «Ցերաժշտական այբբենարան»-ից, I և II մաս)։

Խորացրած աշխատանք յերգի գեղարվեստական և արտահայտիչ կատարման համար։

Ցերգել նոտաներով։

ՆՅՈՒԹԵՐ ՑԵՐԳԵՑՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

1. Առաջնորդին (յերկձայն)—Ազատ Մանուկյանի։
2. Նոյեմբերին » » »
3. Ցերգ Ղուկաս Ղուկասյանի (յերկձայն)—Մուշ. Աղայանի։
4. Արևի պես անմար ու վեհ—Արամ Քոչարյանի։
5. Լորիկ (յերկձայն)—Անտ. Մայիլյանի։
6. Լենինին—Կովալևայի։

7. Լենինյան քայլերգ—Շուխմանի։
8. Սարեն կուզա ձիավոր, ժողովրդ.—մշ. Գ. Այունիի։
9. Թիկունդա (բինդեոլ), ժողովրդ.—մշ. Ռոմ. Մելիքյանի։
10. Ջաղցի դռնով յես անցա, ժող.—մշ. Մուշ. Աղայանի։

Դավիդենկո—«Смело друзья», յերկձայն։

Կրասև—«Мопровская», յերկձայն։

Ընկ. Լենինի սիրած յերգը, յերկձայն՝ «Տարար բռնության չարչարանքը»։

Սարո—«Յերգ ընկ. Վորոշիլովի մասին» ռև-մինոր տոնայնությամբ։

Բլանտեր—«Песнь о Сталине», յերկձայն։

Դեգեյտեր—«Ինտերնացիոնալ», յերկձայն։

Եյսլեր—«Песня единого фронта»։

Պոնոմարկովա—«Татарская комсомольская».

Ստարոկադոմսկիյ—«Первомайская-пионерская».

Դունաևսկիյ—«Յերգ հայրենիքի մասին»։

Շպեեր—կանոն «Часы»։

## ՅԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՐԱԴԻՏՈՒԹՅՈՒՆ

### ԳԻՏԵԼԻՔՆԵՐ ՅԵՎ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ոկտավա և սեպտիմա ինտերվալների յուրացում, նախորդ դասարաններում անցած ինտերվալների յուրացում։ Վարժություններ և յերգեր ցույց տրված ինտերվալների սահմաններում։

Կետը քառորդ և ութերորդ նոտաների մոտ։ Չափեր—$^2/_4$ և $^3/_4$։ Ծանոթություն դաշնամուրի ստեղնաշարի, ջութակի գրիֆի կամ ժողովրդական գործիքների հետ։

### ՆՅՈՒԹԵՐ

1. Ոգտագործել «Յերաժշտական այբբենարան», Ռոմ. Մելիքյանի և Ազատ Մանուկյանի (II մասը)։

2. «Նոտային գրագիտության դասագիրք», Միք. Միրզայանի։

Ոգտագործել ծրագրի «Նյութեր յերգեցողության համար» ցանկից համապատասխան յերգեր։

«В сыром бору тропина».

Ստարոկադոմսկիյ—«Первомайская-пионерская».

## ՅԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ՈՒՆԿՆԴՐՈՒՄ

### ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՅԵՎ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

*Ծանոթություն վարիացիոն ֆորմաների հետ։*

*Ծանոթություն դաշնամուրի, ջութակի և ժողովրդական գործիքների հետ։ Համառոտ տեղեկություններ կոմպոզիտորներ՝ Մոցարտի, Բեթհովենի, Շուբերտի, Գրիգի մասին։*

### ՆՅՈՒԹԵՐ

*Վոկալ ստեղծագործություններ. Բեթհովեն—«Եգմոնտ»-ից,* —«Песня Клерхен», «Походная», «Весна»:

*Մոցարտ—«Զան իմ բալիկ սիրասուն» (որորոցի յերգ)։ Շուբերտ* —«Шарманщик» և «Զրաղացպանը». *Գրիգ*—«Весенний цветок», «Песня Сольвейг»։ *Բացի սրանցից ծրագրի «Յերգ» բաժնում ցույց տված նյութերը։*

### ՀԱՅ ԿՈՄՊՈԶԻՏՈՐՆԵՐ

*Ռոմ. Մելիքյան—Մանուկն ու ջուրը, Տուլտուլ։*

*Միք. Միրզայան—Ստալին պապի թռռնիկները, Խնդության յերգ։*

*Կարո Զաքարյան—Պարտիզանական յերգ «Մարջան» ոպերայից։*

### ԻՆՍՏՐՈՒՄԵՆՏԱԼ ԳՈՐԾԵՐ

*Ունկնդրություն պատեֆոնի, սիմֆոնիկ և փողային որքեստրի, դաշնամուրի, ջութակի և այլ գործիքների. ունկնդրություն խորհրդային կոմպոզիտորների մասսայական և խորային յերգերի՝ անցած ծրագրից և ծրագրից դուրս։*

*Ունկնդրություն ռադիո-հաղորդման մանկական, խմբական, ոպերային և այլ հաղորդումների։*

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0003350

540

ԳԻՆԸ 30 կ.

064.

А II 23488

Пров. 1940 г.

# ПРОГРАММЫ
# НАЧАЛЬНЫХ ШКОЛ
# МУЗЫКА И ПЕНИЕ

Тип. Педагогич. института, Ереван 1938

Пров.